Տ. ՎԱԶԳԵՆ ԱՔԵՂԱ ՆԱՆՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՓՈԽՏԵՍՈՒՉ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Տ. Վազգեն աբեղա Նանյանը, որը վերջերս է ավարտել բարձրագույն ուսումնառությունն Իտալիայում, սեպտեմբերի 1-ից նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ:

* * *

Տ. Վազգեն աբեղա Նանյանը ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 15-ին Երևան քաղաքում:

1983 թ. ընդունվել է Երևանի Զերժինսկու անվան թիվ 20 և 1993 թ. ավարտել թիվ 149 միջնակարգ դպրոցը:

1993-1998 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998 թ. Վիլենովի Ուղղափառ Ակադեմիայում հետևել է անգլերեն լեզվի դասընթացներին:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

1999 թ. պաշտոնավարել է որպես Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի քարտուղար և ապա՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպման գրասենյակի գործավար-քարտուղար:

1999-2002 թթ. եղել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիրը:

1999-2000 թթ. մասնակցել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի կողմից եկեղեցականների համար կազմակերպված մենեջմենտի դասընթացներին:

2000 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Սուրբ Հոգու եզրաբանությունը և «բխում» եզրի արտացոլումը հայ դավանաբանական աստվածաբանության մեջ» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրան քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

2002-2005 թթ. սովորել և ավարտել է Հռոմի Պապական Գրիգորյան Համալսարանի դավանաբանական աստվածաբանության ֆակուլտետը՝ ավարտաճառ պաշտպանելով «Տյառնընդառաջի աստվածաբանությունը հայ մանրանկարչական ավանդության մեջ» թեմայով:

2003-2004 թթ. հետևել է Հռոմի Պապական Քրիստոնեական Հնագիտության Համալսարանի դասընթացներին:

2004-2005 թթ. մասնակցել է Ֆրանսիայի Բեզանսոն քաղաքում կազմակերպված ֆրանսերեն լեզվի դասընթացներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ